ԴԱՋԱՆ

Վերին-Խոյգանից դէպի հարաւ-արևմուտք, մօտ կէս ֆարսախ հեռաւորութեամբ, մի բլրի փէշին ընկած է հայաբնակ Դաջանը. դա գեղեցիկ, բանաստեղծական դիրքով մի փոքրիկ գիւղ է, որն ունի զով և առողջարար կլիմայ։ Գիւղի առաջ փռուած են կանաչ արտերը, որոնցից քառորդ ժամ հեռու, արտերի կողքին, մի բլրի վրայ ընկած են Դաջանի այգիները, որոնք գեղեցիկ տեսք են տալիս գիւղին։ Բնակիչները գաղթել են պարսկաբնակ Տաշքիշան գիւղից, 100 տարի առաջ. նրանց թիւը 25 ընտանիքից չի անցնում 187 շնչով, որի 97-ը արական է և 90-ը իգական. նրանք հիւրասէր են։ Խմելու ջուրն աղբիւրի է, որոնք բղխում են գիւղի փէշերից։

Հողատիրութեան ձևն «առքաբի» — կալուածատիրական է. հողատէրերն են Քէրիմ, Սուլթան-Մահմուտ, Միրզա-Ղուլի և Ղօլամ-Ռէզա խանները. հողազուրկ գիւղացիները մշակում են աղաների հողերը և բերքի $^1/_3$ մասը տալիս են նրանց. մօտաւորապէս տարեկան 180 բեռ ցորեն և գարի տալիս են, բացի այդ, 60 թուման էլ պետական հարկ են վճարում։ Հողը մեծ մասամբ ջրովի է, որը վարում են արօրով և ցանում նոյն հացահատիկները։

Գիւղն ունի մի անշուք եկեղեցի Ս. Ստեփաննոս անունով. դպրոց չունի։ Ձմրան մի քանի տղաներ հաւաքւում են քահանայի մօտ կարդալ-գրել սովորելու։

Այստեղ էլ գիւղացիութիւնը տնտեսապէս խիստ քայքայուած դրութեան մէջ է գտնւում, որ հետևանք է աղաների կողմից կատարուած անվերջ հարստահարութիւնների. նրանք իրենց քմահաճոյքի համաձայն հարկեր են վերցնում, մտնում են տներից ներս և տանում այն, ինչ որ ցանկանում են. այնպէս որ, գիւղացու տուն ու տեղը, նրա գոյքը դարձել է այլևս աղաների սեփականութիւնը. խեղճ գիւղացիներն ոյժ չունեն բողոքելու, նրանք դարձել են անբան և տանում ամեն ինչ լռութեամբ համակերպելով. կարծես